

«ԱՍՍՆԱ ԾԻՆԵՐԻ» ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ՇԱՐԱՖ-ՆԱՄԵՈՒՄ»

Բանասիր, գիտ. դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅԱՆՅԱՆ, պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Հայ հին վիպական բանահյուսություն մեջ մի քանի տարբերակներով առկա է Երկու Եղբայրների վիպական գրույցը, որի հնագույն տարբերակը դրանցված է Աստվածաշնչում. Ասորեստանի Սենեբերիմ թագավորի որդիները՝ Սարասար և Ագրամելեր, սպանում են իրենց հորը և փախչում գալիս են Արարադի երկիրը¹: Այս դեպքը պատմական իրողություն է, ստույգ ժամանակադրված, որ հանդիպում է հնագույն դրավոր աղբյուրներում մի քանի անգամ: Այսպես, ըստ «Բաբելոնյան ժամանակագրության»՝ «Թեբետ ամսի 20-րդ օրը (այսինքն՝ մ. թ. ա. 681 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, իսկ ըստ Ն. Ադոնցի՝ հունվարին)՝ Սինախերիբին՝ Ասորեստանի թագավորին, խռովության ժամանակ սպանեց նրա որդին»²: Սինախերիբին հաջորդած նրա մյուս որդու՝ Ասարխադոնի արձանագրությունները գալիս են լրացնելու պատմական հիշյալ տեղեկությունը: Ըստ այդմ՝ Ասարխադոնի հայրասպան եղբայրները «լսելով իմ (Ասարխադոնի— Ս. Հ., Հ. Բ.) արշավի մոտենալու մասին, թողնեցին իրենց հավաքած զորքերը և փախան հայտնի չէ, թե ուր»³: Պարտություն կրելով Ասարխադոնից՝ մարդասպան եղբայրները փախչում են Շուպրիա⁴:

Հայկական ավանդությամբ, որ մեջ է բերում Մովսես Խորենացին, Հայաստան ապաստանած եղբայրներից Սանասարին (Սարասար) «մեր քաջ նախնի Սկայորդին»՝ Պարույրը, բնակեցնում է Ասորեստանի սահմաններին մոտ, Հայաստանի հարավ-արևմտյան մասում: Սանասարի սերունդն աճելով ու բազմանալով լցնում է Սիմ լեռը (Սասուն), Սանասարից են, ըստ Խորենացու, գոյանում Աղձնյաց աշխարհի բղեշխները: Իսկ եղբայրը (ըստ Խորենացու՝ Արդամոգան) բնակվում է նույն Սիմ լեռան հարավ-արևելյան կողմում, և նրանից սերում են Արծրունի և Գնունի նախարարական տները⁵:

Ըստ Ա. Լաստիվերտցու՝ ավանդության համաձայն Սանասունը (Սասուն) ծագել է նրա հիմնադիր նախնու՝ Սանասարի անունից: Թովմա Արծրունու

¹ Տե՛ս Աստուածաշունչ, Թագ. չորրորդ, ԺԹ, 36—37:

² Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 131:

³ D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia. II, Chicago, 1927, էջ 505: И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники об Урарту, ВДИ, 1951, № 2, 3, 4, էջ 63. Նաև՝ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. II, Երևան, 1971, էջ 426:

⁴ Նույն տեղում:

⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. II, էջ 426: Ուսումնասիրողները Ագրամելեր անվան տակ տեսնում են Սինախերիբի որդիներից մեկին՝ Արադ-Նինիլին, իսկ Շարեցերի (Սարասար) անվան տակ՝ մ. թ. ա. 681 թ. զորավար, Լյոնիմ՝ Նարուշարուստին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. II, էջ 426: Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 130—131:

⁶ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, II, ս. ԻԳ:

վկայությամբ էլ՝ սասունցիք «Սանասնայք զինքեանս անուանեն», այսինքն՝ դարձյալ կապված Սանասարի անվան հետ⁷:

Այս պատմությունն իր էական գծերով մտել է «Սասնա ծռեր» վեպի մեջ և կազմել նրա առաջին ճյուղի բուն բովանդակությունը, հարկավ, վիպա-առասուպելական բազմաթիվ նոր միջադեպերով ու մոտիվներով հարստացած⁸:

Երկրորդ գրույցն ավանդված է Մովսես Խորենացու և Սեբեոսի պատմություններում⁹: Մամիկ և Կոնակ եղբայրները (ըստ Խորենացու՝ Մամ-Կոն) ձենական սրբայական (կամ՝ նշանավոր) տոհմից, զժտվելով ապստամբում են ձենաց թագավորից, պարտվելով ապաստանում են պարսից Արտավան թագավորի մոտ: Երբ ձենաց թագավորը Արտավանից պահանջում է ապստամբներին, վերջինս եղբայրներին ուղարկում է իր ազդական հայոց թագավորի մոտ: Հայոց թագավորից ապստամբում է Սլկունյաց նահապետը: Թագավորի խորհրդով եղբայրներն սպանում են ապստամբ նահապետին, և թագավորը նրանց է նվիրում Սլկունիների կալվածքները և նրանց կարգում նախարար: Մամիկը և Կոնակը հաստատվում են Տառնում և Սիմ լեռան վրա. նրանցից է սերում Մամիկոնյանների նախարարական մեծ տոհմը:

Այս նույն գրույցը մեկ այլ տարբերակով առկա է Հովհան Մամիկոնյանի Տարոնի պատմության մեջ: Ըստ Հովհան Մամիկոնյանի՝ Դեմետրոս ու Գիսանեն եղբայրներ են, ցեղով՝ հնդիկ իշխաններ, որոնք զավաղություն են սարքում Հնդկաստանի թագավորի դեմ: Հալածվելով արքայական զորքերից, նրանք փախչում, ապաստանում են հայոց Վաղարշակ թագավորի մոտ, որը

7 Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Թարգմ. Վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 85: Թոմաս Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 121:

8 «Սասնա ծռեր» վեպի պատմների մի զգալի մասը, որ պարունակում է առաջին ճյուղը, սկսվում է երկվորյակ եղբայրների հրաշալի կամ սովորական ծննդի, իրենց կռապաշտ կամ մահմեդական թագավոր հոր (երբեմն՝ հայրացուի) հետ ունեցած հակամարտության, վերջինիս սպանության, փախուստի, Հայաստանում ունեցած արկածային թափառումների, Սասունում վերջնական բնակություն հաստատելու և Սասունի տերերի տոհմի հիմնադրման՝ տարբեր կոնֆլիկտներով հարուստ վիպական պատմությամբ: Վեպի այն պատմմաները, որոնք ունեն առաջին ճյուղը, իրենց տարբերություններով հանդերձ բոլորն էլ հանգում են հիշյալ սյուժետային սխեմային: Վեպի մի բանի պատմությունում երկվորյակ եղբայրների հայրը կամ հայրացուն Աստուրաստանի Սեներեթիմ թագավորն է, կամ պարզապես մի օտար կռապաշտ թագավոր, պատմների զգալի մասում՝ Բաղդադի կռապաշտ կամ մահմեդական խալիֆա, երբեմն էլ Ոստանի բուրգ ընկ. Աջմու թագավորի տղա, Մսրա կռապաշտ թագավորի որդի Փաշա, կռապաշտ Հնդա Մելիք, բրիստոնյա Ուոքհաս իշխան և այլն: Երկվորյակ եղբայրներից մեկը պատմների ձեռնոց մեծամասնության մեջ հանդես է գալիս Սանասար անունով, երբեմն՝ Սինամ-Քերիմ կամ Սինամ-Սարիմ, երկրորդ եղբայրը հանդես է գալիս Աբամելիք, Աղնամելիք, Մելիք, երբեմն՝ Արզըլ-Քերիմ և Սենե-Քարիմ. իսկ ավելի հաճախ՝ Բաղդասար անուններով: Եղբայրների հայրը կամ հայրացուն միշտ օտար թագավոր է (կամ իշխան), իսկ մայրը՝ հաճախ՝ հայոց բրիստոնյա թագավորի կամ իշխանի դուստր: Բոլոր դեպքերում Սասունի հիմնադիր եղբայրները սերում են արքայական նշանավոր տոհմերից: Վեպում եղբայրները լեռնային Սասունն իրենք են հայտնաբերում, բայց բնակվում են ու բնակեցնում որևէ թագավորի կամ իշխանի համաձայնությամբ ու թույլտվությամբ: Ըստ վեպի՝ Սասուն տեղանունը ծագում է եղբայրների կառուցած բերդի վիթխարիությունից («էս ինչ սասում (մեծ, հսկա) քարեր են», «էս տուն չի՝ սասում ի» — ասում է բերդի անվանադիր ծերունին) կամ քարակոփ, սյունածածկ կառուցվածքից («Քար վրը բարին, սուն վըր սան, էղավ Սան-սուն = Սասուն»):

9 Մովսես Խորենացի, Բ. պ. 2Ա: «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, դր. Կ. էջ 12—13:

նրանց է նվիրում Տարոնի երկիրը՝ իշխանությամբ հանդերձ: Տարոնում նրանք կառուցում են Վիշապ քաղաքը: Տարիներ անց թագավորն սպանում է երկու հղբայրներին և իշխանությունը հանձնում նրանց երեք զավակներին, որոնք կառուցում են իրենց անուններով կոչվող Կուառ, Մեղաի և Հոռեան ավանները¹⁰։ Մ. Աբեղյանն այս պատմության մեջ իրավամբ տեսնում է Մամիկ և Կոնակ եղբայրների զրույցի «մի մթնացած արձագանք հետին դարերի» և գտնում, որ «Գիսանեայ-Դեմետրի անունով պատմվել է Մամ-Կոնի զրույցը»¹¹։

Այսպիսով, հայկական վաղ միջնադարյան աղբյուրների զրավոր տվյալների համաձայն, Սասունի և Տարոնի իշխանական տների ծագման մասին հայ ժողովրդի մեջ պատմվել են երեք ավանդություններ, որոնք, իրենց տարբերություններով հանդերձ, ունեն մեծ ընդհանրություններ։ Վերջիններս հանդում են հետևյալին. օտար աշխարհի (Ասորեստան, Ճենաստան, Հնդկաստան) երկու եղբայր-արքայազներ կամ իշխանազներ ապստամբում են իրենց թագավորից կամ սպանում նրան, հալածվելով փախչում, ապաստանում Հայաստան, հայոց թագավորից ստանում կալվածքներ և դառնում նախարարական նշանավոր տոհմերի հիմնադիրներ։ Այս է այն ընդհանուր սյուժեն, որ ընկած է հայկական այդ զրույցների հիմքում։ Եթե Մամիկ և Կոնակի, Դեմետր և Գիսանի զրույցները պատմական ստույգ փաստերով չեն վավերականացված և մնում են ժողովրդական ավանդության սահմաններում, ապա Սանասարի և Ազրամեղքի զրույցի սկզբնամասը վավերականացված է ասորա-բաբելական զրավոր պատմական աղբյուրներով։ Զրույցի երկրորդ մասը՝ Աղծնիքի, Վասպուրականի, Սասունի տերերի ծագման պատմությունն արդեն արդյունք է տեղական-հայկական ավանդության, որ, ամենայն հավանականությամբ, ունի պատմական խոր արմատներ։ Սանասարի և եղբոր զրույցն այնպես ամուր է հյուսված եղել Սասունի, Վասպուրականի և Տարոնի հայ ազգաբնակչության վաղնջական պատմությանը, որ ոչ միայն հորինացու ժամանակից ի վեր, այսինքն V դարից սկսած չի մոռացվել, այլև հարատևել է մինչև X դար, մեկ անգամ ևս հիշատակվել ու նոր տվյալներով լրացվել դարի նշանավոր պատմիչ Թովմա Արծրունու կողմից¹², ապա, որ հատկանշական է, մտել է հայ նոր ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» մեջ և գոյատևել ու հասել մեր օրերը։

Մ. Աբեղյանը վաղուց էր դիտել, որ հայ հին «Պարսից պատերազմ» և նոր ժողովրդական «Սասնա ծռեր» վեպերը միանման սկսվածք ունեն. երկուսի սկիզբն էլ «կապված է նոր տոհմերի ծագման հետ»¹³, եթե «Պարսից պատերազմն» սկսվում է մի կողմից հայոց Մամիկոնյան սպարապետության, մյուս կողմից՝ պարսից Սասանյան հարստության ծագման պատմությամբ, ապա «Սասնա ծռերն» սկսվում է Սասունի տերերի ծննդով ու Սասունում հաստատվելու պատմությամբ։ Բոկ երբ նկատի ենք առնում, որ Մամիկոնյան սպարապետական տոհմի և Սասունի տերերի ծագման պատմությունները տիպաբանորեն զրեթե նույնանում են, ապա Աբեղյանին հետևելով, կարելի է ասել, որ մեր հին ու նոր վեպերը զրեթե միևնույն սկսվածքն ունեն։

¹⁰ Տե՛ս Հովհան Մամիկոնյան, Պատմություն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 107—109։

¹¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. II, 1966, էջ 298—300։

¹² Տե՛ս «Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմություն տեղն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 8, 36, 37, 44, 121։

¹³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 192։

Այսպիսով, հայկական հնագույն աղբյուրներով (որոնց հնությունն անցնում է V դարից էլ առաջ, երբ նկատի ենք առնում այդ գրույցների ամենավաղ արձանագրող Մովսես Խորենացու մարաբասյան աղբյուրը) և հայ նոր ժողովրդական վեպով՝ հայ իշխանական տների մասին մի քանի տարբերակներով տարածված ավանդական գրույցները, անկախ իրենց տարբերություններից, աշխարհագրականորեն կապված են հատկապես Սասունի և Տարոնի հետ։ Ուրեմն, այդ գրույցները ոչ միայն տիպաբանորեն են նույնական, այլև աշխարհագրորեն, այսինքն՝ նույնատիպ ավանդական գրույցները պատմվել են նույնանուն տեղավայրերի հայ իշխանական տների ծագման վերաբերյալ։ Եթե գրույցի տարբերակների փաստը վկայում է հայկական միջավայրում դրանց հին ու տարածված լինելու մասին, ապա այդ գրույցների աշխարհագրական տեղավայրերն իրենց տիրողներով մեծ և նշանակալից դեր են խաղացել հայ ժողովրդի ծագման ու պատմական դարգացման մեջ։

Ըստ նորագույն պատմագիտական հետազոտությունների¹⁴, հայ ժողովրդի ծագման բնօրրաններից և հայկական պետականության անդրանիկ կազմավորումներից է եղել Վանա ծովից հարավ-արևմուտք ընկած երկրամասը, որ ասուրա-բաբելական ու ուրարտական գրավոր աղբյուրներում կոչվել է Արմե-Շուպրիա կամ Ուրմե։ Վերջինիս մեջ են մտել հին հայկական Տարոնը և Աղձնիքը (որի մեջ և այժմյան Սասունն ու Բիթլիսը)։ Արմե-Շուպրիայում իր անառիկ լեռնային դիրքով, ըստ երևույթին, բացառիկ դեր է կատարել Սասունը հարևան Ասորեստանի և Ուրարտուի նվաճողական ոտնձգությունների դեմ։ Եվ բնավ էլ պատահական չէ, որ Ասորեստանից հալածված եղբայրներն, ըստ ավանդության ու ժողովրդական վեպի, ապաստանում են լեռնային Սասունում, որը, ասուրա-բաբելական և ուրարտական գրավոր աղբյուրներից դատելով, եղել է անառիկ ապաստարան՝ Ասորեստանից և Ուրարտուից քաղաքական ու սոցիալական ճնշումներից հալածված փախստականների համար¹⁵։

Պատահական չէ նաև Խորենացու այն վկայությունը, որ հայկական հնագույն իշխանական տները՝ Արծրունիները, Գնունիները և Աղձնյաց բղշխները, որոնք մեծ դեր խաղացին հայ ժողովրդի գալիք պատմության մեջ, առաստարակ սերում են Սանասարից և Եղբորից։ Նույնքան պատահական չէ նաև այն փաստը, որ Եղբայրների գրույցը այլ տարբերակներով փոխանցվել է Տարոնի, հետագայում նաև Սասունի միջնադարյան տերերին՝ Մամիկոնյաններին, որոնք բացառիկ պատմական դեր խաղացին նույն ժամանակաշրջանի հայկական պետականության ամրապնդման և դարգացման ամբողջ ընթացքում։ Եվ այս պատմական մեծ դերով է, անշուշտ, պայմանավորված նաև այն հանգամանքը, որ հայ հին ու նոր վիպական-հերոսական բանահյուսության մեջ («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», «Սասնա ծռեր») Տարոնն ու Սասունը հանդես են գալիս իբրև վիպական անփոփոխ կենտրոններ, որոնց մեջ ապրող ու զործող հերոսների շուրջը հյուսվել են մեր հին ու նոր մեծ վեպերը։

Հայ վիպական բանահյուսության պատմության մեջ տեական ու անփոփոխ դեր խաղացած վիպական այդ կենտրոններում, ուր թե՛ հնում և թե՛ ամ-

14 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 423—434, համապատասխան մատենագրական տվյալներով։

15 Նույն տեղում, էջ 426—429։

բողջ միջնադարի ընթացքում, ինչպես տեսանք, դոյատեւել են մեր հարուստ վիպական ավանդույթները, միանգամայն բնական է, որ այդ ավանդույթները հայերից փոխանցվեին իրենց մեջ նոր բնակություն հաստատած այլազգի հա-րեաններին:

XVI դարի քուրդ նշանավոր պատմիչ Շարաֆ իսան Բիթլիսու «Շարաֆ-նամե» երկը, որ մասնագետների իրավացի կարծիքով քրդերի միջնադարյան պատմության միակ աղբյուրն է, կարևորագույն տվյալներ է պարունակում նաև XVI դարի Իրանի և սահմանակից երկրների պատմության, այդ թվում՝ Հայաստանի ու հայերի վերաբերյալ¹⁶:

Շարաֆ իսան Բիթլիսու երկում, ինչպես միջնադարյան պատմագրական երկերում առհասարակ, բացի գրավոր աղբյուրներից, զգալի չափով օգտագործված է նաև բանավոր ավանդությունը, հատկապես ժողովրդական գրույցներն ու վկայությունները, որոնք, անկասկած, ունեցել են պատմական արժեք: Ապրելով հայկական շրջաններում և սերտ շփման մեջ մտնելով այդ շրջանների հայկական ազգաբնակչության հետ, Շարաֆ իսանը, ինչպես երևում է նրա երկից, տեղյակ էր ոչ միայն հայկական միջավայրում ստեղծված բուզանդական «Դիզենիս Ակրիտաս» վեպի առանձին գրվագներին¹⁷, այլև Անդեղյա Տորքի մասին գրույցներին¹⁸: Իրանցից են նաև Սասունի և Բիթլիսի քուրդ տիրակալների մասին եղած պատմական ավանդությունները, որ իր երկի տարբեր գլուխներում մեջբերում է Շարաֆ իսան Բիթլիսին:

«Շարաֆ-նամեի» երրորդ բաժնի երրորդ գլուխը վերնագրված է. «Սասնո կառավարիչների մասին, որոնք հայտնի են որպես Հազոյի կառավարիչներ»: Այս գլխում հեղինակը բերում է հետևյալ ավանդությունը. «...Սասնո կառավարիչների ծննդաբանությունը հասնում է Սասանյան տիրակալներին և Բիթլիսի կառավարիչներին. արժանավստահ ավանդության համաձայն նրանք (իմա՝ Սասունի կառավարիչները — Ս. Հ., Հ. Բ.) սերում են երկու եղբայրներից: Նրանց առհմի հիմնադիրները եղել են երկու եղբայրներ՝ Իզադդինն ու Զիադդինը, որոնք Հայաստանի մայրաքաղաքից՝ Ախլաթից, եկել են Բիթլիս: Նրանք Դավիթ անունով ոմն վրացուց զրավել են Սասուն բերդը, որն անցել է Իզադդինին, որի մասին մանրամասն կխոսվի Բիթլիսի կառավարիչների հանգամանքները [նկարագրելիս]: Քանի որ քրդերի ցեղը Իզադդինին կոչում է Իզադին, ապա և այդ շրջանների կառավարիչները հայտնի են Իզադանի [անունով]: Ռուժակի (ռուզակի) աշիրաթից նրանք եկել են այդ երկիրը Սասուն բերդը գրավելու ժամանակ»¹⁹:

Շարաֆ իսանը, համաձայն իր խոստման, երկու եղբայրների գրույցին հանգամանորեն անդրադառնում է իր գրքի չորրորդ բաժնի առաջին մասում, ուր նա քրդական ռուզակի ցեղի ծագման ու ռազմական նվաճումների պատ-

16 *Տէ՛ս Ս ա ռ ա ֆ - խ ա ն և Բ ի թ լ ի ս ի Ս ա մ ս ա ճ լ ի Ն Բ ի լ լ ի ս ի*, Սարաֆ-Наме, т. I, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967.

17 *Տէ՛ս Ք. Մ. Բ ար թ ի կ յ ա ն*, Дигенистика в курдском эпосе о Златоруком Хане, 2002 ԳՍ «Իրարեր» (հաս. գիտ.), 1967, № 1, էջ 47—54:

18 *Տէ՛ս Հ. Մ. Բ ար թ ի կ յ ա ն*, Տորք (Տորք) Անդեղի առասպելի արձագանքները «Շերեֆ-նամեում», «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2: նաև՝ Ք. Մ. Բ ար թ ի կ յ ա ն, Заметки о византийском эпосе о Дигенисе Акрите, «Византийский Временник», т. XXV, 1964, էջ 158—159:

19 «Шараф-Наме», էջ 247—248:

մոլորությունն է անում: «Պատմում են,— դրում է Շարաֆը հանք,— [որ] այդ ժամանակ Բիթլիսի և Հազոյի (իմա՝ Սասունի— Մ. Հ., Հ. Բ.) կառավարիչն էր ոման Դավիթ՝ Վրաստանի փոխարքաներից: Ռուզուկի [ցեղը] նրանից գրավեց Բիթլիսի վիլայեթն ու Հազոն: Մեկ այլ վարկածով՝ Բիթլիսը նրանք զավթում են քուրդակի ցեղից, իսկ Հազոն՝ վրացիներից: Ոմանք գտնում են, որ նրանք Բիթլիսը խլեցին զուկիսի ցեղից. [այս] խոսքերի ճշմարտության պատասխանատվությունը կրում է պատմողը: Մի խոսքով, երբ նրանք դարձան Բիթլիսի և Հազոյի մարզերի տիրակալներ, որոշ ժամանակ անց նա, ով հանձն առավ ռուզուկի ցեղի կառավարումը՝ վախճանվեց, և նրանով վերջացավ իր տոհմը: Ենթադրյալ ժամանակից ի վեր ռուզուկի ցեղից բոլորն իրար դեմ ելան, և ոչ մեկը մյուսին չէր ենթարկվում: ...Որոշ ժամանակ անց, քանի դեռ նրանց գործերն այդ վիճակում էին, աշիրաթների և ցեղի ավագները խորհրդակցեցին, եկան հետևյալ կարծիքին. «Լխլաթ քաղաքում ապրում են Լրկու Եղբայր՝ Իզադդին և Զիադդին անուններով, որոնք սերում են Սասանյան արքայատոհմից: Մենք կբերենք նրանց մեզ մոտ, և ուզածին, ով արժանի և ընդունակ կլինի մեզ կառավարել, կդարձնենք էմիր, և նրանց կհանձնենք իշխանության սանձերը, միայն թե գործերը երկրում կարգավորվեն և բարգավաճեն, իսկ խռովարարները չվարժվեն խառնակչությունների ու խռովությունների կազմակերպման: Ցեղի ավագանին ու հասարակ մարդիկ, եթե կհամաձայնվեն այդ պայմանին, թող այն կատարեն»: Ցեղային ավագանուց մի քանի հոգի մեկնեցին Լխլաթ քաղաքը և բոլոր պատիվներով ու արարողություններով արքայազներին բերեցին Բիթլիս: Մի խումբը Իզադդինին կարգեց Բիթլիսը կառավարելու, մյուսը՝ Զիադդինին՝ Հազոն»²⁰:

Այնուհետև շարունակության մեջ (գրքի չորրորդ բաժնի երկրորդ մասում) հեղինակը դարձյալ անդրադառնում է Լրկու Եղբայրներին և այս անգամ մեջ է բերում վիսյական մեկ այլ գրույց. երբ Իզադդինը դառնում է Բիթլիսի կառավարիչ, իսկ Զիադդինը՝ Հազոյի, որոշ ժամանակ անց Բիթլիսի բնակիչները մեծ սեր ու հարգանք են տալիս իզադդինին, մինչդեռ Եղբայրը՝ Զիադդինը, նման հարգանք չէր վայելում իր ենթակա սասունցիներից: Զիադդինը Հազոյից գալիս է Բիթլիս Եղբորը տեսնելու: Նրան շատ է դուր գալիս Բիթլիսի կլիման. բացի այդ, տեսնելով Բիթլիսի ավագանու և հասարակ մարդկանց առ Եղբայր տաժաժ սերն ու հարգանքը, Զիադդինը վճռում է տիրանալ Բիթլիսին: Դադտնի համաձայնության գալով բերդի կայազորի հետ, Զիադդինը Եղբորից թույլտվություն է խնդրում մեկնելու Հազո: Իզադդինը ուղեկցում է Եղբորը: Երբ քաղաքից փոքր-ինչ հեռանում են, Զիադդինը Եղբորն ասում է, որ ինքը մատանին մոռացավ թողել է բերդում և խնդրում է թույլ տալ իրեն՝ գնալ մատանին բերելու: Իզադդինը մնում է, զբաղվում որսորդությամբ, իսկ Զիադդինն արագ վերադառնում է բերդ, փակում դարպասները և լուր ուղարկում Եղբորը, թե իրեն շատ է դուր գալիս Բիթլիսի կլիման, ինքը մի քանի օր կմնա Բիթլիսում, իսկ Եղբայրը թող մի քանի օրով գնա Հազո: Իզադդինն իմանալով այդ՝ վերադառնում է բերդ և դարպասները փակ գտնում: Որքան խնդրում է Եղբորը՝ ներս թողնել, Զիադդինը չի համաձայնվում: Իզադդինն ստիպված գնում է Հազո, տիրանում Սասունին: Վերջում Շարաֆը հանն ավելացնում է, որ Հազոյի արդի փոխարքաները, որոնք հայտնի են Լզիզան անունով, սերում

²⁰ Նույն տեղում. էջ 403—404:

են Իզադդինի սերնդից, իսկ Բիթլիսի կառավարիչները սերում են Զիադդինից և կոչվում են Դիադդիններ²¹:

Այսպիսով, Շարաֆ խան Բիթլիսու բերած վկայություններից պարզվում է, որ XVI դարում Բիթլիսի և Սասունի քրդերի միջավայրում իրենց իշխողների ծագման մասին տարածված են եղել տոհմական ավանդական գրույցներ²²: որոնց սեղմ բովանդակությունը հանդում է հետևյալին. Հայաստանի մայրաքաղաք Ախլաթում ապրում են երկու արքայազուն եղբայրներ, որոնք կամ իրենք են զալիս դրավում Սասունն ու դառնում Սասունի և Բիթլիսի տիրակալներ, կամ նրանց ցեղակիցներն են դրավում այդ մարզերն ու եղբայրներին հրավիրում դրանք կառավարելու: Եղբայրների միջև հակամարտություն է ծագում, և Սասունի տեր Զիադդինը դառնում է Բիթլիսի տիրակալ, որից հետագայում սերում է Դիադդինների իշխանական տոհմը, իսկ Բիթլիսի տեր Իզադդինը դառնում է Սասունի տիրակալ, և նրանից ծագում է Ալիյան կոչված իշխանական տունը:

Այս միևնույն ավանդությունը, եթե ոչ իր մանրամասներով, ասպ ղեթ իր հիմնական գծերով համընկնում է վաղ միջնադարյան աղբյուրներում և «Սասնա ծռեր» ժողովրդական վեպում մի քանի տարբերակներով առկա վերոբերյալ հայկական ավանդական գրույցներին: Այսպես.

Թե՛ հայկական և թե՛ քրդական գրույցներում իշխող տոհմերի նախահայրերը օտար ծագումով երկու աբխազն կամ իշխանազն եղբայրներն են (Սանասարն ու Ադրամելերը (Բաղդասար) Ասորեստանի կամ որեէ օտար կռապաշտ թագավորի, կամ էլ Բաղդադի խալիֆայի զավակներ են, Մամիկը և

21 Նույն տեղում, էջ 407—408:

22 Որ Շարաֆ խանի բերած գրույցներն ունեն բանահյուսական ծագում ու նկարագիր, վկայում են «պատմում են», «ոմանք գտնում են», «արժանավստահ ավանդության համաձայն» և նման այլ չղումները, որ անում է «Շարաֆ-նամեի» հեղինակը: Բացի այդ, եղբայրների գրույցի մեջ հիշատակվում է Սասուն բերդի գրավման երկու տարբեր վարկած. մի զեպրում Սասուն բերդը Դավթից անմիջապես գրավում են երկու եղբայրները, մյուս զեպրում՝ ոռոգակի ցեղը, որին հաջորդում են եղբայրներին խլաթից հրավիրելու և Բիթլիսի ու Սասունի կառավարիչներ կարգելու միջադեպերը: Այս տարբերակների հանգամանքները ևս խոսում են գրույցների՝ բանավոր ավանդությունից սերելու մասին: Միակ գրավոր վկայությունն ըստ Շարաֆ խանի հավաստիացման այն է, որ «որոշ պատմական երկերում բանիցս նշվել է ու հիշատակվել, թե Բիթլիսի կառավարիչների ծննդաբանությունը հասնում է Սասանյան տիրակալներին, և նրանք հայտնի են դարձել իբրև Անուշիրվանի սերունդներ» («Шараф-Наме», էջ 406): Որ գրավոր աղբյուրներն էլ կարող էին որևէ տոհմի ծագման մասին զբոսնել հենվել բանավոր ավանդության վրա, միանգամայն բնական է և անգամ օրինաչափ. հին և միջնադարյան աղբյուրներում տոհմերի ծագման պատմությունները մեծ մասամբ սերում են բանավոր ավանդությունից: Բայց խնդիրն այն է, որ Շարաֆ խանն ինքը, մատնանշելով հիշյալ գրավոր վկայությունները, այնքան էլ ավատ չի ընծայում դրանց վավերականությանը: Ուստի անմիջապես ավելացնում է. «Առավել ճշմարտանման է, որ Անուշիրվանի իշխանության մեջ Փիրուզի որդի Զամասպը՝ Սասանյան հարստության հինգերորդ [տիրակալը], ղեկավարում էր Հայաստանն ու Շիրվանը Կուրազի փոխարքայության իրավունքով: Իր մահից հետո նա թողնում է երեք զավակ՝ Նարսին, Սուրհարին և Բահվաթին»: Այս երրորդ զավակից էլ, որ բնակվում էր Ախլաթում, սերում են Բիթլիսի բուրդ տերերը, հանձին Իզադդին և Զիադդին եղբայրների («Шараф-Наме», էջ 406—407): Ուրեմն, Շարաֆ խանի կարծիքով, հիշյալ գրավոր վկայության մեջ ամենաճշմարտանմանը այս վերջին վարկածն է, որին նա որոշ չափով հավատ է ընծայում: Այսինքն, այդ գրավոր վկայությունները հեղինակի համար նույն արժեքն ունեն, ինչ իր բերած բանավոր գրույցներն ու վկայությունները, և ըստ երևույթին, դրանք ևս հենվել են բանավոր ավանդության վրա:

Կոնակը սերում են ճենաց, Դեմետրի և Գիսանեն՝ Հնդկաստանի, իսկ Իզադ-դինն ու Զիադդինը՝ Սասանյան արքայական կամ իշխանական տոհմերից)։

Եղբայրները (բրդականում՝ եղբայրների հայրը) օտառ երկրներին եկել են Հայաստան և դարձել Հայաստանի իշխաններ (բրդական գրույցով՝ եղբայրների հայր Բահվաթր ունի տիրույթներ և բնակվում է Ախլաթում, որը հիշվում է իբրև Հայաստանի մայրաքաղաք)։

Եղբայրները իշխաններ են կարգվում ոչ թե ինքնազուտիս, այլ Հայաստանի թագավորի կամ բրդական ցեղական ավագանու ցանկությանը։

Եղբայրները թե՛ հայկական, թե՛ բրդական ավանդությամբ իշխողներ են կարգվում Հայաստանի գրեթե նույն վայրերում՝ Աղձնիքում (որ ընդգրկում է նաև Սասունն ու Բիթլիսը) և Տարոնում։

Եղբայրները դառնում են իշխանական տների հիմնադիրներ, որոնցից սերում են իշխանական նշանավոր տոհմեր. Մամիկից և Կոնակից՝ Մամիկոնյանները, Սանասարից՝ Աղձնիքի բզեչիները (ըստ վեպի՝ Սասունի դուրսագնական տերերը—Մհեր, Դավիթ, Մհեր), Աղրամելեքից՝ Արծրունիներն ու Գնունիները, Զիադդինից՝ Դիադդինները, Իզադդինից՝ Ադիդանները։

Երկու կարգի գրույցները, տիպաբանական այս ընդհանրություններով հանդերձ, ունեն մի էական տարբերություն. եթե հայկական ավանդությամբ եղբայրներն ապստամբում են արյունակից թագավորից կամ նրան սպանելով՝ փախչում և ապաստանում են Հայաստանում, ապա բրդական գրույցներում վիպական այդ գրվագն իսպառ բացակայում է։ Ինչի ալ, բրդական գրույցում մանրամասնորեն խոսվում է եղբայրների միջև ծագած հակամարտության մասին, որը պատճառ է դառնում եղբայրների տիրույթների փոխանակման։ Այս միջադեպը ևս բացակայում է հայկական ավանդության մեջ, թեպետ «Մասնա ծուկ» վեպում եղբայրների միջև քանիցս ծագում են հակամարտություններ, որոնք սերում են բոլորովին այլ ազդագրական իրողություններից, որոնց կանգրադառնանք փոքր-ինչ հետո։ Այստեղ նշենք միայն, որ վեպի մի քանի պատումներում Սանասարը մնում և իշխում է Սասունում, իսկ Բազդասարը դնում է Բազդազ և դառնում Բազդազի թագավոր։

Այս ևս են այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ առկա են խնդրո առարկա հայկական և բրդական գրույցներում։

Տիպաբանության առումով ընդհանրությունները լիովին տիպորոշում են երկու կարգի գրույցների սյուժեների նույնությունը. տարբերությունները ավելի մոտիվային մանրամասներ են, որոնք միշտ էլ առկա են նույնակերպ սյուժեների մեջ, որից էլ հենց ծագում են սյուժետային տարբերակները։

Բայց այստեղ կա մի շատ կարևոր հանգամանք, որ աներկբա է դարձնում տվյալ սյուժեների նույնությունը։ Դա պատմա-աշխարհագրական տեղավայրերի նույնությունն է, այն տեղավայրերի, որոնց իշխողների շուրջը հյուսվել են այդ ավանդությունները։ Քրդականում խոսքը Բիթլիսի և Սասունի մասին է, հայկականում՝ մի դեպքում Աղձնիքի, որի մեջ մտնում են Սասունն ու Բիթլիսը, մյուս դեպքում՝ սոսկ Սասունի, ապա և Տարոնի, որի Մամիկոնյան իշխողներին միջնադարում ենթակա էր Սասունը։ Հետևաբար նույն տեղավայրերի շուրջ հյուսված նույնատիպ ավանդությունները բնավ չեն կարող տարբեր կամ պատահական ծագում ունենալ։ Ընդհանրության հիմքերը պետք է փնտրել պատմության մեջ։

Հայագիտության մեջ հավաստված է, որ քրդերը Մրվանյան հարստության ժամանակից սկսած (X—XI դդ.) «Միջագետքից բարձրանում են դեպի Հայաստանի լեռները. բայց մինչև XIII դարի վերջերը Սասունում դեռ քրդեր չեն հիշվում»²³։ Քրդերը Սասուն են մուտք գործում հավանաբար XIII դարի վերջերին, որովհետև «հաջորդ XIV դարում քրդերն արդեն հաստատված են Սասունի լեռներում»²⁴, և Սասունը հետզհետև ենթարկվում է նրանց։ Հաջորդ հարյուրամյակում օսմանյան թուրքերի բռնի ջանքերով Արևմտյան Հայաստանում իսպառ բնաջնջվում են ու վերացվում հայ իշխանական տները՝ հայ սելտականության վերջին բջիջները, և ժողովուրդն ամբողջապես ընկնում է օտար տիրողների լծի տակ։ XVI դարի կեսերին պարսուղալացի ճանապարհորդներ Ա. Տենրեյրոն և Մ. Աֆոնսոն Արևելքում շրջելիս անցնում են նաև Հայաստանով, լինում են Բիթլիսում, Խլաթում, Սասունում (Հազո)։ Մեստրե Աֆոնսոն հաղորդում է, որ Հազոն (ըստ նրա՝ Հիզոն) գտնվում էր մի քրդի տիրապետության տակ։ Քաղաքի «բնակիչները, թվով 500—600 մարդ, մեծ մասամբ հայեր են և քրիստոնյաներ... նրանք խոսում են նույն լեզվով, ապրում են երկրագործությամբ և անասնապահությամբ, մի քանիսր՝ առևտրով...։ նրանք, նաև շատերն այդ երկրում, համատեղ ապրում են քրդերի [մահմեդականների] հետ, չնայած լեզուների տարբերությանը»²⁵։ Այս վկայությունից պարզվում է, որ արդեն XVI դարում սասունցի հայերը քրդերի հետ ապրել են համատեղ և բարեկամաբար, որ ինքնին ենթադրում է մտավոր շփումների լայն հնարավորություն։

Բայց ենթադրություն անելուց առաջ դառնանք բուն փաստերին։ Շարաֆ Խան Բիթլիսին, ինչպես տեսանք, երկիցս վկայում է, որ Իլագդինն ու Զիադդինը «Դավիթ անունով ոմն վրացուց դրավել են Սասուն բերդը» կամ էլ, ինչպես նա է գրում, «պատմում են՝ այդ ժամանակ Բիթլիսի և Հազոյի կառավարիչն էր ոմն Դավիթ՝ Վրաստանի փոխարքաներից։ Ռուզակի [ցեղը] նրանից դրավեց Բիթլիսի վիլայեթն ու Հազոն»։

23 Ն. Ա. Բ. Ե. Ղ. յ. ան, նշվ. աշխ., էջ 362։ Շարաֆ Խան Բիթլիսին «Շարաֆ-նամեում» XVI դարի վերջերին հավաստիացնում է ըստ «արժանավստահ ավանդության», թե իբր արդեն 760 տարի է, ինչ Բիթլիսն իր ենթակա մարզերով (բացառությամբ 110 տարվա) «պատկանում է նրա [խակական] կառավարիչներին» (այսինքն՝ քրդերին, ավելի որոշակի՝ Իլագդին և Զիադդին եղբայրների հիմնադրած տոհմին—Ս. Հ., Հ. Բ., տե՛ս «Илариф-Иаме», էջ 407)։ Ըստ Շարաֆ Խանի՝ ստացվում է, որ Բիթլիսը, նաև Սասունը (որովհետև եղբայրները միաժամանակ են իշխել Բիթլիսին ու Սասունին) արդեն IX դարի առաջին կեսից ենթակա են եղել քրդերին։ Այս հավաստիացումը պատմագիտական բնության չի դիմանում, որովհետև ըստ հայկական, բյուզանդական և արաբական հավաստի աղբյուրների IX դարի կեսերից Տարոնին և Սասունին, արաբական գերիշխանության տակ, տիրում էին Բաղրատունիները, որոնց ժամանակ էլ տեղի է ունենում սասունցիների հայտնի ապստամբությունը (850 թ.) Հովնան Բաղրատունու ղեկավարությամբ ընդդեմ արաբների։ Իսկ XI դարի կեսերից արդեն, սելջուկների արշավանքների ժամանակ, Սասունին իշխում էին դարձյալ Մամիկոնյանները, որոնցից նշանավոր է եղել Թոռնիկը։ Այնուհետև մինչև XIII դարի կեսերը Սասունին փոխնիփոխ իշխում են հայ իշխանները, մինչև որ էյուբյանների բարձրանալով՝ Սասունի անկախությունն ընկնում է (տե՛ս Մ. Ա. Բ. Ե. Ղ. յ. ան, նշվ. աշխ., էջ 356—369, համապատասխան պատմագիտական աղբյուրներով)։

24 Մ. Ա. Բ. Ե. Ղ. յ. ան, նշվ. աշխ., էջ 371։

25 R. Gulbenkian et H. Berberian, La legende de David de Sassoun d'après deux voyageurs Portugais du XVI^e siècle, „Revue des Etudes Armeniennes“, t. VIII, 1971, էջ 175—188։

Որ այս երկու տարբեր վկայությունները պատմական ստույգ փաստեր չեն, այլ ավանդական վարկածներ, երևում է թեկուզ այն բանից, որ Շարաֆ խանը շարունակության մեջ բերում է նույն իրողության մասին ևս երկու այլ վարկած. «Մեկ այլ վարկածով, — գրում է նա, — Բիթլիսը նրանք զավթում են քուրդակի ցեղից, իսկ Հաղոն՝ վրացիներից: Ոմանք գտնում են, որ նրանք Բիթլիսը խլեցին գուրխի ցեղից»: Եվ հեղինակն անմիջապես ավելացնում է. «[Այս] խոսքերի ճշմարտության պատասխանատվությունը կրում է պատմողը»: Այսինքն՝ Շարաֆ խանը, մեջ բերելով ավանդական բոլոր վարկածները, իրեն ճշմարիտ պատմիչ, դրանց պատմական վավերականության համար պատասխանատվությունն իր վրա չի վերցնում:

Շարաֆ խանի այս վկայությունների վիպական-ավանդական լինելն է պարզում նրա ավագ ժամանակակից, պորտուգալացի Մ. Աֆոնսոն: Նկարագրելով Հաղոյի բնակիչների որսասիրությունը, նա անմիջապես ավելացնում է. «Այս քաղաքում (իմա՝ Հաղոյում — Մ. Հ., Հ. Բ.) է միշտ ապրել հսկա թագավոր Դավիթը (քանզի նա շատ էր սիրում որսորդությունը), որի մասին արդեն խոսեցինք. նա թագավորել է Հայաստանի վրա և կործանել է Ախլաթ [Խլաթ] քաղաքը: Այստեղ եղել է նաև նրա կինը, նույնպես հսկա, խանդավառ անունով. նա ոտքերին կրել է, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր զլխով ու մարմնով դրանց միջով անցնել: Նա թաղված է քաղաքից մի օրվա ճանապարհի վրա գտնվող բերդում. և բուրգը, որ տիրել է քաղաքին, նա, ով սպանել էր իր հորեղբորը, ինչպես ասացինք, հանել է այդ ապարանջանները, որոնք թաղված են եղել նրա հետ, ինչպես և թագավորի [Դավթի] գերեզմանից մի ոսկե խաչ, որ հայերը «Սուրբ Նշան» են կոչել... Այն [խաչը] այնպիսի զորություն է ունեցել, որ երբ նա այդ խաչը կրել է կովի ժամանակ, ոչ մի բանակ չի կարողացել նրան հաղթել... Այդ Դավիթ թագավորը շատ մեծ և հզոր տիրակալ էր, որը թագավորում էր ոչ միայն բովանդակ Հայաստանի, այլև բազում այլ գավառների վրա, ընդհուպ մինչև Թուրքիա, և Կահիրեի սուլթանը նրան հարկ էր վճարում: Այդ քաղաքը իր լայնատարած ողջ շրջաններով կոչվում էր Սանսոն [Սասոն]՝ մի կողմից նկատի ունենալով այդ թագավորի (Դավթի — Մ. Հ., Հ. Բ.) ուժն ու զորությունը, որ միշտ այդտեղ է ապրել, մյուս կողմից այն պատճառով, որ մոտիկ մի ամրոցում պահվում են մի նիզակ և վահան, որոնք պատկանել են նրան»:

Խլաթ քաղաքը նկարագրելիս թե՛ Աֆոնսոն և թե՛ Տենրեյրոն գրեթե միևնույն բանն են հաստատում: Աֆոնսոն գրում է, թե Ախլաթը (Խլաթը) եղել է երբեմնի մի մեծ և խիտ բնակեցված քաղաք, որը կործանվել է «Դավիթ անունով մի հայ թագավորի կողմից, որպեսզի թույլ չտա քաղաքը օգտագործվելու թուրքերից, որոնք այն ժամանակ արշավում էին երկիրը նվաճելու»: Այնուհետև երկու հեղինակն էլ, նկարագրելով քաղաքի բերդն ու կից գմբեթավոր շենքերը, գրում են ըստ ավանդության, թե «դրանք կառուցվել են Սամսոնի [Դավթի] կողմից, որը ծնվել է այդտեղ»²⁶:

26 Ի. Գյուլբենկյանն ու Հ. Պերպերյանը ճիշտ են նկատել Տենրեյրոյի և Աֆոնսոյի վկայությունների ու նկարագրությունների նույնության հասնող նմանությունը: Եվ նրանք իրավամբ գտնում են, թե, բանի որ Ա. Տենրեյրոյի ճամփորդական նոթերի առաջին հրատարակությունը եղել է 1560-ին, այսինքն Մ. Աֆոնսոյի ճամփորդությունից հինգ տարի տուաջ. ուստի հավանական է, որ Աֆոնսոն օգտվել է Տենրեյրոյի նոթերից հատկապես Հայաստանի քաղաքներից մի բանիսի նկարագրություններում: Եթե այդ այդպես է, ապա Դավթին տրվող Սամսոն անու-

Ա. Տենրեյրոյի և Մ. Աֆոնսոյի այս մեծարժեք հաղորդումների մեջ Ռ. Գյուլբենկյանն ու Շ. Պերպերյանն իրավամբ տեսնում են «Սասնա ծռեր» վեպի ամենավաղ պատումի հարուստ հիշատակներ: Բայց տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է խնդրի մեկ այլ կողմը. պորտուգալացիների վկայություններից պարզվում է, որ XVI դարի կեսերին Խավթի վեպը, այն աստիճանի, որ անգամ հասել է օտարերկրյա ճանապարհորդների ականջներին և արժանացել հատուկ ուշադրության: Եթե Աֆոնսոյի հայաստանյան թարգմանիչ-ուղեկիցը եղել է հայարդի (Սիմավոն Ֆերնանդես), ապա Տենրեյրոյի ուղեկցի ազգությունը հայտնի չէ: Ուղեկիցների ազգությունը, հարկավ, նման դեպքերում կարևոր է, քանի որ նրանք են այն բանավոր սկզբնաղբյուրները, որոնց հետ, տեղական լեզուների չիմացության պայմաններում, առաջին հերթին հաղորդակցվում են ալազգիները: Բայց թարգմանիչ-ուղեկցի ազգությունն այս դեպքում այնքան էլ էական չէ, որովհետև Աֆոնսոյի վկայությամբ՝ Դավթի «սուրբ նշանը» գերեզմանից հանողը եղել է Հազոյի բուրդ իշխանի եղբայրը, իսկ այդ գորավոր խաչի կանխեղին, պատուհասից ազատվելու համար, ձեռք մատուցողը եղել է ինքը՝ Հազոյի տիրակալը: Բացի այդ, Տենրեյրոն վկայում է (ինչպես և Աֆոնսոն), որ Հազոյի մոտակայքում կա մի շատ հին և փոքր բերդ, որտեղ պահվում են Դավթի նիզակն ու վահանը: Իսկ բերդը, պարզ է, որ պետք է լիներ Կրկերի տրամադրության տակ, որոնք չէին կարող չիմանալ այնտեղ պահվող նիզակի և վահանի տիրոջ պատմությունը: Նշանակում է, հայերից բացի XVI դարում Սասունի բրդերը ևս ծանոթ են եղել Դավթի մասին ավանդական գրույցներին, որոնց իսկությունը հիմնավորված է եղել անգամ առարկայական ապացույցներով: Եվ այս պարագայում է, որ բնավ ստույգ պատմական իմաստով չպետք է հասկանալ Շարաֆ Խանի այն վարկածը, թե Բիթլիսի և Հազոյի կառավարիչն էր ոմն Դավիթ՝ Վրաստանի փոխարքաներից, որոնցից ոուղակից եղր գրավել է Բիթլիսի վիլայեթն ու Հազոն, կամ եղբայրները՝ Սասուն բերդը:

Պատմության մեջ Սասունի Դավիթ անունով տերերից հայտնի է միայն Դավիթ Բագրատունին, այն էլ՝ IX դարում, երբ Սասունում և հարակից գավառներում բրդեր առհասարակ չկային: Իսկ Դավթի վրացի լինելը կամ Սասունը վրացիներին երբեք պատկանելու մասին հաղորդումը պատմական առումով թյուրիմացություն է, որովհետև վրացիները երբեք չեն իշխել Սասունին:

Սա նշանակում է, որ Շարաֆ Խանը իր հիշյալ վարկածներն առաջ բերելով՝ նկատի է ունեցել Սասունի բրդերի միջավայրում ընտանի դարձած վիպական Դավթի մասին այն ավանդական գրույցները, որ տեսանք պորտուգալացի ճանապարհորդների վկայություններում: Իսկ թե ինչու է բրդական ավանդության մեջ Դավիթը վրացի կամ վրաց փոխարքա դարձել, ապա դա կարող է

ներ, որ առկա է երկու հեղինակի մոտ էլ, պետք է ենթադրել, դալիս է մեկ աղբյուրից: Մեզ թվում է, թե դա պարզ շփոթումն է Սանսոն (Սասուն) տեղանվան, պարզ հնչյունանմանության պատճառով: Եթե Սանսոնը օտարերկրյա ճանապարհորդների Սասուն տեղանվան ազավաղումը չէ, ապա պիտի ենթադրել, որ XVI դարում տեղացիների մեջ Սասունը կոչվել է Սանասունը հին անվամբ, կամ ժողովրդական Ման + սուն (= սյունը սյան վրա) ստուգաբանությամբ, որ առկա է վեպի մի շարք պատումներում: Համենայն դեպս Սամսոն և Դավիթ անուններն անհարկ են միմյանց և ցարդ ոչ մի պրավոր ու բանավոր աղբյուրով չվկայված: Պարզապես Սասունի (Սանսոնի) տերը իր առասպելական ուժի պատճառով պորտուգալացիների մոտում գուցեղվել է բիրիական Սամսոնին և նրանց նոթերում աղայես էլ կոչվել:

պատմական հիշողություն լինել այն իրողություն, որ, ինչպես Գիրական Գանձակեցին է վկայում, երբ XIII դարի կեսերին թաթարները գրավում են Հայաստանը, Սասունը հանձնում են հայազգի Սադուն իշխանին: Սադունը ծոռն էր Քուրթ մականունով նշանավոր հայազգի իշխանի («Սա է հայր Սադունին և Դավթի, պապ Շէր-Բարոբին, հօրն Սադունին»), որը կալվածներ և մեծ հարգանք ու արտոնություններ ուներ Վրաստանում: Ըստ Գանձակեցու, այս Քուրթ իշխանի քրոջ գավակներն էին վրաց ամիրսպասալարներ Զաքարեն ու Իվանեն²⁷: Այդ վերջին Սադունին, որ սկսեց ծառայել է վրաց զորքերում, ապա թաթարների գալով շատ հայ իշխանների նման մտնում է թաթարների զորքի մեջ, որին և հանձնվում է Սասունի իշխանությունը: Աբեղյանի ենթադրությամբ Քուրթ իշխանը (ինչպես նրա մականունն է վկայում) հավանաբար սերել է Արեմայան Հայաստանից և մասնավորապես Սասունի իշխանական տոհմից, որի սերունդ Սադունը «գարձյալ տեր է դառնում Սասունին»: «Ինչպես էլ լինի,— գրում է Աբեղյանը,— պետք է ընդունել, որ Սասունի իշխանները վրաց տիրապետության ժամանակ այդպիսի մի դեր կատարել են, քանի որ մեր վեպի մեջ Դավիթը գնում է Գյուրջիստան տիրում: Մհերն իշխում է Գյուրջիստանում և այնտեղից գալիս է Սասուն և կռվում Կոզբազնի կամ Մսրա Մելիքի թոռների դեմ և մինչև իսկ Հալեբ ու Բաղդադ գնում,— որ անշուշտ հիշողություն է հայ իշխանների և Սասունի Սադուն իշխանի ծառայելուն թաթարների բանակի մեջ Բաղդադի խալիֆայի և էտլյան հարստության դեմ վարած կռիվների ժամանակ»²⁸:

Այս հավանական ենթադրությանը պետք է ավելացնել նաև այն, որ վիպական Դավթի ավանդական գրույցներին հարել է նաև XIII դարի Սասունի իշխան, Վրաստանում սնված ու ծառայած Սադունի, գուցե և նրա հաջորդների պատմական հիշողությունը, և քրդական միջնադարյան ավանդության մեջ վիպական Դավիթը դարձել է վրաց փոխարքա կամ իշխան:

Քանի որ Սասունի և Բիթլիսի քրդերի միջավայրում XVI դարում ծանոթ են եղել Դավթի ավանդական գրույցներին, և անգամ վիպական Դավիթը համարվել է իրական-պատմական անձնավորություն, և խլաթցի երկու եղբայրներ Իզադդինն ու Զիադդինը անմիջական հարաբերության մեջ են գրվել Դավթի հետ (նրանից խլել են Սասուն բերդը), ապա պետք է ենթադրել, որ երկու եղբայրների գրույցը հայկական ավանդությունից քրդերին է փոխանցվել «Սասնա ծռեր» վեպի միջոցով:

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, որ հայ վիպական ավանդության մեջ Սանասարի թոռ կամ որդի հանդես եկող Դավիթը քրդականում դարձել է երկու եղբայրներին հակառակորդ և նրանցից առաջ գրվել:

Վիպական ավանդության մեջ հոր և որդու տեղերի և դերերի փոփոխությունը հաճախակի է, այդպես և մեր «Սասնա ծռեր» վեպում: Բայց որ քրդական ավանդության մեջ Դավիթը հակառակորդ ու այլազգի է դուրս եկել հայկականում իր պապ կամ հայր հանդես եկող երկվորյակ եղբայրներին, ապա դա կատարվել է այն պարզ պատճառով, որ երկու եղբայրների գրույցը քրդ-

27 Տե՛ս Գիրական Գանձակեցի, Պատմություն հայոց. աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 208—209, 386, նաև՝ Մ. Աբեղյան, Նշվաշխ., էջ 370:

28 Մ. Աբեղյան, Նշվաշխ., էջ 370—371:

դաժանում, կապվելով քուրդ վերնախավի Բիթլիսի և Սասունի տիրակալական միտումներին, ազգայնացել, դարձել է Սասունի և Բիթլիսի նոր տերերի տոհմաբանությունը հնացնող և նրանց տիրապետությունը պատճառաբանող իրակություն: Սասունի հին կամ բնիկ տերերի ծագման ավանդությունն իրենց վրա են առել նրա նոր տերերը, հարկավ, համապատասխան վերախմբադրումով ու փոփոխություններով: Իսկ նման դեպքում Սասունի բուն տեր վիսպական Դավիթը, որի վեպն իր տարբեր դրվագներով լայնորեն տարածված էր տեղի հայ և քուրդ ազգաբնակչության մեջ և անգամ հիմնավորված առարկայական ապացույցներով, բնականաբար պետք է հակադրվեր երկրի նոր տերերին և դառնար նրանց հակառակորդ: Քրդական ավանդությամբ եղբայրների «Հայաստանի մայրաքաղաք» հլաթից սերած ու հլաթի տերեր լինելն էլ նպաստում է հիշյալ տեսակետի հիմնավորմանը, քանի որ, ինչպես տեսանք պորտուգալացի ճանապարհորդների վկայությունից, Դավիթը ըստ տեղական ավանդության՝ ծնվել է հլաթում, և XVI դարում նրա անվան հետ է կապված եղել հլաթի ամրոցի և հարակից գմբեթավոր շենքերի կառուցումը: Եթե հավաստի է պորտուգալացի ճանապարհորդների այս վկայությունը (որովհետև վեպի XI-X դդ. գրառված պատումներում բացակայում է Դավիթ՝ հլաթում ծնվելու մասին որևէ հիշատակություն²⁹), ուստի պետք է ենթադրել, որ XVI դարում եղել է վեպի մի պատում կամ ավանդություն, ըստ որի Դավիթ պապերը (երկվորյակ եղբայրները) եղել են հլաթում: Այդ մասին ուղղակի վկայություն կա «Սասնա ծռերի» պատումներից մեկում: Եղբայրները (Սանասար և Ասլիմեփ), հալածվելով հայրենի երկրից, գալիս են հլաթ և ապավինում Մելքոն թագավորին: Նրանք ծառայության են մտնում հլաթի թագավորի մոտ, որից այնուհետև ստանում են իրավունք, օժանդակություն և բնակիչներ՝ Սասունը շինելու և բնակեցնելու համար: հլաթի Մելքոն թագավորը խլաթցի մի աղջկա պսակում է Սանասարի հետ և նրա ու եղբոր կառուցած բերդի անունը դնում Սասուն³⁰: Վեպում պահպանված այս իրողությունը ըստ ամենայնի ձայնակցում է խլաթցի եղբայրների մասին քրդական միջնադարյան ավանդությանը և որոշ չափով պատճառաբանում Իզադդինի և Զիադդինի հլաթից դալն ու Սասունին տիրելը³¹:

²⁹ Միայն մի առիթով Գ. Հովսեփյանը իր գրառած մի պատումի տողատակին հիշատակում է, որ իր ձեռքի տակ եղած վեպի մեկ այլ տարբերակով (որը նա, ցավոք, չի հրատարակել և ցարդ հայտնի չէ), Մսրա Մելիքը գալիս է Ղոզրաղնու վրեժն առնելու և հարկը տանելու ոչ թե Սասունից, այլ հլաթից, ուր գտնվում են Դավիթն ու իր բռնի Չենով Հովանը (տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Բ, 11 մաս, Երևան, 1951, էջ 77): «Սասնա ծռերի» մի շարք պատումներով Դավիթ որդի Մհերը կամ Դավիթը հոր վրեժը լուծելու համար ավերում է հլաթը (տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Ա, Երևան, 1936, էջ 1082—1083, հատ. Բ, 1 մաս, Երևան, 1944, էջ 93, 125—126, 246, հատ. Բ, 11 մաս, էջ 302—303, 523—524): Մեր վեպի պատումներով, ուրեմն, հլաթն ավերողը ոչ թե Դավիթն է, ինչպես պորտուգալացիների վկայություններում, այլ նրա որդին (որդու հետ՝ երբեմն Դավիթ եղբայրները): Կամ պորտուգալացիներն են հոր և որդուն շփոթել միմյանց, որ միանգամայն հնարավոր է, կամ պետք է բնորոշել, որ XVI դ. հլաթի ավերումը կապելիս են եղել Դավիթի անվան հետ:

³⁰ «Սասնա ծռեր», հատ. Բ, 1 մաս, էջ 52—56:

³¹ Այստեղ թերևս ավելորդ չէ հիշատակել մեկ հանգամանք: Քրդական ավանդության մեջ չի նշվում եղբայրների երկվորյակ լինելը, բնդհակառակը, Շարաֆ Խանը մի տեղ անդամ ասում է, որ նրանք հորեղբորորդիներ են (տե՛ս («Шараф-Наме», էջ 247): Այսուհանդերձ եզրայր-

Բերած բոլոր փաստերից ու փաստարկներից, կարծում ենք, կարելի է հանդել հետևյալ եզրակացության. հայ հին ու միջնադարյան ժողովրդական ավանդության մեջ մի քանի տարբերակներով հայտնի իշխանական տների հիմնադիր երկու եղբայրների զրույցը, որ պատմվել է Սասունի և Տարոնի հայ իշխողների մասին, ուշ միջնադարում փոխանցվել է Հայաստանի, մասնավորապես Սասունի և Տարոնի նոր տիրակալներին՝ քրդերին։ Քրդական ավանդությունը հիմնականում պահպանել է հայկական զրույցների սյուժետային դժերը, այսինքն, որ ամենակարևորն է, պատմվել է Հայաստանի նույն տեղավայրերի տիրողների մասին, ինչ հայկական ավանդության մեջ։ Հայկական զրույցը ուշ միջնադարում քրդերին է փոխանցվել «Սասնա ծռեր» վեպի միջոցով³², որն այդ ժամանակ, ըստ պատմական վկայությունների, խիստ տարածված էր հայերով և քրդերով խառը բնակեցված Սասունում և հյւսիսում։ Այս վերջին եզրակացության օգտին է վկայում նաև այն իրողությունը, որ հայ ժողովրդական վեպը XIX—XX դդ. հայտնի էր և լայնորեն տարածված Սասունի, Մոկսի, Շատախի, Տարոնի և Ալաշկերտի բուրգ ազգաբնակչության մեջ։ 1930-ական թթ. և անգամ մեր օրերում Արևելյան Հայաստան գաղթած քրդերի սերունդներից գրանցվել են «Սասնա ծռեր» վեպի քրդերեն պատումներ³³։

Ճիշտ նույն կերպ իրանական «Ռուստամ Զալ» վեպը հայկական վիպական ավանդության մեջ է փոխանցվել Արևմտյան Հայաստանում բնակվող հարևան քրդերից։ Բացի հայերեն վիպվող «Ռուստամ Զալի» տարբեր պատումների բազմաթիվ գրառումներից, մինչև օրս էլ կենդանի են հայ վիպասացներ, որոնք «Ռուստամ Զալը» վիպում են քրդերեն, «Շահ-նամեի» վեհ ու հանդիսավոր չափով։

Այս երկու կարգի փաստերն արդյունք ու արտահայտություն են երկու հարևան և բարեկամ ժողովուրդների դարավոր համակեցության ու փոխադարձ մտավոր շփումների, որ իր արձագանքն է գտել նրանց հոգևոր մշակույթի մեջ։

Ների քրդական ավանդությունն ունի սրբազան երկվորյակների մասին տարածված զրույցների գծեր։ Այսպես, բոտ միջազգային զրույցների՝ երկվորյակներից մեկը բարի է, մյուսը՝ չար, մեկը միշտ ֆիզիկապես ուժեղ է մյուսից, մեկը միշտ փոքր-ինչ հիմարավուն է, մյուսը՝ խելոք, երկվորյակների միջև միշտ առկա է որևէ հակամարտություն և անգամ՝ պայքար (տե՛ս Մ. Я. Штернберг, Античный культ близнецов при свете этнографии, Петроград, 1916)։ Երկվորյակների մասին միջազգային զրույցներին բնորոշ այս գծերը նույնությամբ դրսևորված ենր գտնուի «Սասնա ծռեր» վեպում, Սանասարի և Բաղդասարի փոխհարաբերություններում, որովհետև, ինչպես նշել ենք, Սանասարի և եղբոր պատմական ավանդությանը հարակցվել են սրբազան երկվորյակների միջազգային առասպելն ու հավատալիքները։ Նույնը գրեթե առկա է նաև եղբայրների քրդական զրույցում, Զիադդինն ավելի խելոք է, խորամանկ, հավանաբար և ուժեղ, քան Իզադդինը, նրանց միջև ծագում է հակամարտություն, և Զիադդինը եղբորից հափշտակում է Իփթիսը, Սասունը թողնելով նրան։ Սա ապացույց է եղբայրների երկվորյակ լինելուն, որ թեպետ չի վկայված, բայց փաստորեն առկա է։ Այս կողմից ևս քրդական զրույցը խիստ մերձենում է Սանասարի և Բաղդասարի վիպական ճյուղին։

32 Կարևոր է նշել, որ Շարաֆ Խանը Դավթի անունն իր երկում բերում է արևմտահայերեն արտասանությամբ՝ Թավթի։

33 Պատումներից մեկը պահպանել է քրդագետ Հ. Ջնդին 1930-ական թթ. վերջերին և հրատարակել (տե՛ս А. Д ж и д и, Курдский фольклор Ереван, 1957, էջ 157—160)։ Մյուսը գրանցել է բանասիր, գիտ. դոկտոր Ս. Հարությունյանի ղեկավարած արշավախումբը Ապարանից, 1973 թ.։

ОТГОЛОСКИ ЭПОСА «САСНА ЦРЕР» В «ШАРАФ-НАМЕ»

Доктор филол. наук С. Б. АРУТЮНЯН, доктор историч. наук Р. М. БАРТИКЯН

(Резюме)

В древней и средневековой армянской эпической традиции, по сообщению армянских историков, в нескольких вариантах распространено сказание о двух братьях — князьях или царевичах, которые происходят из родов чужеземных вельмож, приезжают в Армению и основывают в Тароне и Сасуне новые княжеские роды. Этот тип предания и составляет основную сюжетную линию первой ветви эпоса «Сасна црер».

Однотипное сказание сохранилось и в книге «Шараф-наме» курдского историка XVI в. Шараф-хана Бидлиси. По его сообщению, курдские правители Битлиса и Сасуна происходят от двух братьев — Иззаддина и Зийаддина, родом из Сасанидской династии.

Курдская эпическая традиция совпадает с армянской не только *типологически*, но и *географически* и рассказывает о правителях тех же этно-географических районов, что и в армянских сказаниях.

По историческим данным, армянский эпос «Сасна црер» в XVI в. был распространен в Сасуне и Хлате, населенных армянами и курдами: Шараф-хан Бидлиси свидетельствует, что братья Иззаддин и Зийаддин отобрали Сасун у его правителя Давида. В статье делается вывод, что данное сказание переходило в курдскую эпическую традицию через армянский эпос «Сасна црер», распространенный и среди курдов.